



Դիանա ԳԱԼՈՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

2001 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային փրկարեսազիություն» մասնագիտությամբ և ընդունվել ասպիրանտուրա: 2004 թ. ստացել է փրկարեսազիության թեկնածուի, 2014 թ.՝ փրկարեսազիության դոկտորի գիտական ասպիրանտ, 2018 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում:

2005 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ միջազգային փրկարեսական հարաբերությունների ամբիոնում. սկզբում՝ որպես ասիստենտ, 2006 թ.՝ որպես դոցենտ: 2017 թ. ընտրվել է ՀՊՏՀ միջազգային փրկարեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի պաշտոնում: 2019 թ. նշանակվել է ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ապա ռեկտորի պաշտոնակատար: 2020-ից մինչ այժմ՝ Հայաստանի պետական փրկարեսազիական համալսարանի ռեկտորն է: Հեղինակ է շուրջ 57 գիտական հրատարակումների, այդ թվում՝ 10 մենագրության, 5 ուսումնական ձեռնարկի:

 ORCID - <https://orcid.org/0000-0001-5700-764X>

ՌՈՒՍԱԿԱՆ ՑՈՐԵՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՀԱՅԻ ԽՆԴԻՐԸ»

DOI: 10.52174/2579-2989_2022.2-38

Հիմնաբառեր. *ցորենի արտադրություն, ցորենի արտահանում, այլուր, հացահատիկի պակասուրդ, պարենային անվտանգություն*

Վերջին տարիներին աշխարհում տեղի ունեցող անկանխատեսելի իրադարձությունների խորապակերտում չափազանց կարևորվում է որոշ երկրների պարենային անվտանգության հարցը:

COVID-19-ի հետևանքով խաթարված փրկարեսական կապերն ու մատակարարման շղթաները նախորդ տարի կարգավորման միտումներ էին դրսևորում: Թեև համաշխարհային շուկան շարունակում էր գործել համավարակի պայմաններում, սակայն արդեն բավականաչափ հարմարվել էր այդ իրավիճակին: 2021 թ.-ի առանցքային առանձնահատկություններից էր հիմնական ապրանքների գների կայուն աճը, որը հասել էր վերջին 10 տարվա առավելագույն մակարդակին: Սակայն, համաշխարհային պարենային շուկաներում հաստատված փխրուն կայունությունն արմատապես խաթարեց ռուս-ուկրաինական պատերազմը: Պարենային ապահովության և բարձր գնաճի հիմնախնդիրներին արդեն իսկ առերեսվել են աշխարհի շատ երկրներ, քանի որ հակամարտող երկու երկրներն էլ պարենային կարևորագույն ապրանքների (ցորեն, եգիպտացորեն, բուսական յուղ և այլն) առաջատար արտադրողներ և արտահանողներ են:

Դեռևս 2021 թ.-ի հունիսին Ռուսաստանում մտցվեցին հացահատիկի արտահանման սահմանափակումներ՝ ցորենի, գարու և եգիպտացորենի համար կիրառելով լողացող մաքսատուրքեր, ինչի հետևանքով 2021 թ.-ի հուլիսի 1-ից մինչև 2022 թ.-ի փետրվարի 22-ը ՌԴ-ից հացահատիկի արտահանումը

կրճատվեց 28.5%-ով: Բացի դրանից, երկրի կառավարությունը հացահատիկի արտահանման գործող կառուցակարգի շրջանակում տարեվերջին սահմանեց հացահատիկի արտահանման մասնաբաժին (քվոտա)¹ 11 մլն տոննա, այդ թվում ցորենի՝ 8 մլն տոննա, որը գործելու է 2022 թ.-ի փետրվարի 15-ից մինչև հունիսի 30-ը: Հետևաբար՝ կարելի է ենթադրել, որ 2021-2022 մարքեթինգային տարում Ռուսաստանից ցորենի արտահանումը կկրճատվի ևս 10%-ով՝ կազմելով մոտ 35 միլիոն տոննա¹:

Միաժամանակ, ՌԴ կառավարության 2022 թ. մարտի 14-ի որոշմամբ՝ 2022 թ. մարտի 15-ից մինչև օգոստոսի 31-ը ժամանակավորապես արգելվեց ՌԴ-ից ԵԱՏՄ երկրներ սպիտակ շաքարի, եղեգնաշաքարի հումքի և հացահատիկի (ցորեն, մեսիմ, տարեկան, գարի և եգիպտացորեն) արտահանումը: Թեև ՌԴ գյուղատնտեսության նախարարության տվյալներով ՌԴ-ն ներկայում ունի հացահատիկի անհրաժեշտ պաշարներ և մինչև բերքահավաքը կարող է ապահովել հավելյալ արտահանում, սակայն սահմանափակումները կիրառվում են ստեղծված իրավիճակում չնախատեսված արտահոսք թույլ չտալու համար: Ընդ որում, ԵԱՏՄ երկրները, անհրաժեշտության դեպքում, կարող են գնել հացահատիկի հավելյալ քանակություն՝ ըստ ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարության տրամադրած լիցենզիաների:

Այս իրավիճակում պարենային ապահովության հիմնախնդիրն առանձնահատուկ սրությամբ է ծառայել Հայաստանի Հանրապետության առջև, քանի որ համապատասխան ռազմավարական ապրանքների գերակշիռ մասը ՀՀ-ն ներմուծում է հենց ՌԴ-ից: Ընդհանրապես, ՌԴ տնտեսությունը, որպես ՀՀ ռազմավարական գործընկեր երկիր, «իր լավ օրերը չի ապրում» ոչ միայն պատերազմի, այլև Արևմուտքի կողմից կիրառվող պատժամիջոցների պատճառով, և, ամենայն հավանականությամբ, վիճակն էլ ավելի կծանրանա, քանի որ պատժամիջոցների «վերջը», կարծես թե, չի երևում: Անկասկած, ՀՀ տնտեսությունը ևս անմասն չի մնալու այս ամենից, իսկ հիմա առաջնային լուծում են պահանջում մի շարք ապրանքների, այդ թվում՝ ցորենի ապահովվածության հետ կապված խնդիրները:

Դիտարկենք ռուս-ուկրաինական պատերազմի և ՌԴ-ի նկատմամբ արևմտյան պատժամիջոցների հնարավոր հետևանքները հացահատիկի համաշխարհային շուկայի և ՀՀ պարենային ապահովության տեսանկյունից, մասնավորապես՝ հացահատիկի պակասուրդի ռիսկերը և «առանց հացի» մնալու հավանականությունը:

Աշխարհում տարեկան արտադրվում է շուրջ 770.0 մլն տոննա ցորեն, որից սպառվում է միջին հաշվով 97-98%-ը: 2021 թ.-ին արտադրվել է 776.2 մլն տոննա



Թաթուլ ՄԿՐՏՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր


2000թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի «Ազգային տնտեսագիտություն» բաժինը և ընդունվել առկա ուսուցման ասպիրանտուրա: 2003 թ. հաջողությամբ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն՝ ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական ասպիրանտ, 2009 թ. դոցենտի կոչում: 2016 թ. պաշտպանել է դոկտորական արտենախոսություն և ստացել վրենսագիտության դոկտորի գիտական ասպիրանտ:

2019 թ.-ին նշանակվել է ՀՊՏՀ գիտության գծով պրոֆեսոր:

Մասնակցել է հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների: Մասնագիտական վերապատրաստումներ է անցել Բելգիայում, Թաիլանդում, Մալայզիայում, Լիբիայում: Հեղինակ է ավելի քան 50 գիտական աշխատանքների:

ORCID - <https://orcid.org/0000-0003-2057-8590>

¹ <https://www.interfax.ru/business/821993>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1



Առաջատար 10 երկրներն ըստ ցորենի արտադրության ծավալների (մլն տոննա) 2020-2021 մարտեթինգային տարում²


ցորեն և սպառվել 765.4 մլն տոննա: Ցորենի ցանքատարածություններով առաջատար երկրներն են Հնդկաստանը (31,4 մլն հա), Ռուսաստանը (28,7 մլն հա), Զինաստանը (23,4 մլն հա³), ԱՄՆ-ը (14,9 մլն հա) և Ավստրալիան (13 մլն հա)⁴: Ցորենի խոշոր արտադրողներ են նաև Կանադան, Ուկրաինան, Պակիստանը, ԵՄ երկրները (գծապատկեր 1): Զինաստանը, Հնդկաստանը, ՌԴ-ն և ԱՄՆ-ն միասին ապահովում են ցորենի համաշխարհային առաջարկի շուրջ 48.1%-ը: Միայն ՌԴ-ն ապահովում է ցորենի համաշխարհային արտադրության 10.5%-ը, իսկ Ուկրաինան՝ 3%-ը:

Սակայն, ցորեն արտադրող ոչ բոլոր առաջատար երկրներն են նաև խոշոր արտահանողներ: Այսպես՝ Զինաստանն ու Հնդկաստանը սպառում են իրենց արտադրած ցորենի հիմնական մասը: Ավելին, վերջին 20 տարում Զինաստանը ցորենի լիարժեք ինքնաբավության հասել է միայն 2007-2008 թթ.-ին, իսկ վերջին տարիներին նաև խոշոր ներմուծող է (տարեկան՝ միջին հաշվով 9-10 մլն տոննա): Ինչ վերաբերում է Հնդկաստանին, ապա այս երկիրն ամբողջությամբ ինքնաբավ է և արտահանում է իր արտադրած ցորենի աննշան մասը՝ 1%-ը (տարեկան մոտ 1

մլն տոննա): Այսինքն՝ ցորենի արտահանման առաջատար երկրների ցանկը արտադրության առաջատարների համեմատ տարբեր է: Այսպես՝ 2021 թ.-ին ցորենի խոշոր արտահանող երկրներն են ՌԴ-ն՝ 42.5 մլն տոննա, ԵՄ-ը՝ 29.2 մլն տոննա, Կանադան՝ 26.1 մլն տոննա, ԱՄՆ-ն՝ 23.8 մլն տոննա, Ավստրալիան՝ 15.7 մլն տոննա, Ուկրաինան՝ 15.6 մլն տոննա⁵, որոնք ապահովել են համաշխարհային արտահանման գրեթե 80%-ը: Միայն ՌԴ-ն ապահովում է ցորենի համաշխարհային արտահանման գրեթե 22%-ը, իսկ Ուկրաինան՝ մոտավորապես 8%-ը⁶:

Ռուս-ուկրաինական պատերազմը, ՌԴ կառավարության որոշումները ցորենի արտահանման սահմանափակումների վերաբերյալ, անկասկած, կանդադառնան ցորենի համաշխարհային շուկայի վրա, ինչը, թերևս, կարտահայտվի կարճաժամկետ և երկարաժամկետ էֆեկտներով: Համենայն դեպս, կարճաժամկետ հատվածում գների կտրուկ աճ, վստահաբար, կարելի է կանխատեսել, ինչն արտահայտվելու է նաև ՀՀ տնտեսությունում: Իսկ երկարաժամկետ էֆեկտները կախված են նրանից, թե որքան կտևեն պատերազմական գործողությունները, ինչքան ցորենի ցանքատարածություններ կմշակվեն Ուկ-

² <https://latifundist.com/rating/top-10-stran-proizvoditelej-pshenitsy-v-202021-mg>
³ Ընդ որում, թեև Զինաստանն իր ունեցած ցանքատարածության մեծությամբ 3-րդն է, սակայն, որպես ցորենի բերքատվության բարձր մակարդակ ապահովող երկիր, համաշխարհային արտադրության միանձնյա առաջատարն է:
⁴ <https://www.kynetec.com/>
⁵ <https://latifundist.com/rating/top-10-stran-proizvoditelej-pshenitsy-v-202021-mg>
⁶ <https://stats.oecd.org/#>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Ցորենի ներմուծման, արտադրության ծավալների ու պաշարների փոփոխությունները ՀՀ-ում 2005-2020 թթ., հազ. տոննա⁷


րաինայում, ինչ ավարտ կունենա պատերազմը և այլն:

2020-2021 մարքեթինգային տարում ցորենի համաշխարհային խոշոր ներմուծողներն են Եգիպտոսը (13 մլն տոննա), Ինդոնեզիան (10.5 մլն տոննա), Չինաստանը (10.5 մլն տոննա), Թուրքիան (8.2 մլն տոննա) և Ֆիլիպինները (6.8 մլն տոննա)⁸:

Հայաստանը, իհարկե, փոքր տնտեսությամբ երկիր է՝ սպառման ոչ մեծ ծավալներով, սակայն, նույնիսկ այդ փոքրությամբ հանդերձ, չի կարող անմասն մնալ այս զարգացումներից, քանի որ սպառվող

ցորենի զգալի մասը ներմուծվում է: Այսպես՝ ՀՀ-ում տարեկան սպառվում է շուրջ 500-520.0 հազ. տոննա ցորեն, իսկ վերջին տարիներին սպառման ծավալները նվազման միտում ունեն, և եթե 2014-2015 թթ.-ին սպառվել է 550.0 հազ. տոննա, ապա 2020 թ.-ին սպառումը չի գերազանցել 500.0 հազ. տոննան:


Ցորենի պահանջարկը հանրապետությունում բավարարվում է ներմուծման և արտադրության ծավալների հանրագումարով, իսկ ՀՀ-ից ցորենի արտահանում չի իրականացվում: Գծապատկեր 2-ում



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Ցորենի ներմուծման, օգտագործման ծավալներն ու ինքնաբավության մակարդակը ՀՀ-ում 2005-2020 թթ. (հազ. տոննա)⁹

⁷ https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2020.px/?rxid=8ce47691-ef0f-4871-b802-1d43a7e169b6&fbclid=IwAR3_mYhwG2ik82dSr7fYf9pvpjxhircqsTnvhr2PV0Kc8qnMlnvXcLLHuV0
⁸ <https://latifundist.com/rating/top-10-stran-proizvoditelej-pshenitsy-v-202021-mg>
⁹ Գծապատկերը կազմված է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա՝ www.armstat.am/file/article/-fsec420193..pdf



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Ցորենի ներմուծման և ներքին արտադրության ծավալների շարժընթացը 2005-2020 թթ.¹⁰


ներկայացված են ցորենի համախառն առաջարկի ձևավորման համամասնությունները ՀՀ-ում 2005-2020 թթ.-ին:

ՀՀ-ում օգտագործվող ցորենի գերակշիռ մասը (մոտ 75%-ը) ներմուծվում է, այսինքն՝ ինքնաբավության մակարդակը 25% է: Ընդ որում, վերջին տարիներին այս ցուցանիշն անընդհատ նվազել է. եթե 2014-2016 թթ. դա կազմել է գրեթե 45-50%, ապա 2020 թ.՝ ընդամենը 24.4% (գծապատկեր 3):

Ըստ էության, վերջին 15 տարիներին ՀՀ-ում ցորենի ներմուծման ծավալները մշտապես գերազանցել են արտադրու-

թյան ծավալները, սակայն, 2017 թ.-ից սկսած, արտադրության ծավալները կրտրով կերպով նվազել են, ինչը շարունակվել է մինչև 2021 թ.-ը և, բնականաբար, փոխհատուցվել ներմուծման աճով: Արդյունքում, 2020 թ. ներմուծումը 3.2 անգամ գերազանցել է արտադրության ծավալները՝ ՀՀ տնտեսությունը մեծ կախվածության մեջ դնելով արտաքին շուկաներից, մասնավորապես՝ ՌԴ-ից (գծապատկեր 4):

2017-2020 թթ., ցորենի արտադրության ծավալների կրճատմանը զուգընթաց, հանրապետությունում նվազել են նաև հացա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

ՀՀ բոլոր և հացահատիկային ու հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները 2016-2020 թթ.¹¹

¹⁰ Գծապատկերը կազմված է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա՝ www.armstat.am/file/article-/fsec420193..pdf
¹¹ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2021 թ., <https://armstat.am/file/doc/99526883.pdf>

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Տորենի ներմուծումն ըստ հիմնական երկրների (%)^{12, 13}

	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Երկիրը	Մասնաբաժինն ընդհանուր ներմուծման մեջ						
ՌԴ	99.2	90.9	92.1	89.0	91.0	93.0	92.0
Վրաստան	0.6	1.8	7.9	11.0	4.0	1.3	-
Ռուսաստան	0.1	-	-	-	5.0	4	5
Ղազախստան	-	7.3	-	-	-	-	2.7
Այլ	0.1	-	-	-	-	1.7	0.3

հատկապես մշակաբույսերի ցանքատարածությունները (դրանք ամբողջ ցանքատարածությունների միջինում 54%-ն են): 2020 թ.-ին 2017 թ.-ի համեմատ հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները կրճատվել են 76,4 հազ. հառով կամ մոտ 40%-ով (գծապատկեր 5):

ՀՀ-ն հիմնականում ցորեն է ներմուծում ՌԴ-ից: Այսպես՝ 2021 թ.-ի ընթացքում դա կազմել է ցորենի ներմուծման ընդհանուր ծավալի 91%-ը: Ընդ որում, 2015-2021 թթ.-ի ընթացքում ներմուծման հիմնական ծավալն ըստ երկրների կառուցվածքի էական փոփոխության չի ենթարկվել, և, ըստ տարիների, ՌԴ-ից ներմուծումը մշտապես եղել է 90%-ից ավելի (աղյուսակ 1):

Հարկ է նշել, որ մինչև 2020 թ.-ի Արցախյան պատերազմը ՀՀ ցորենի պահանջարկի որոշակի մասն ապահովվել է նաև Արցախի Հանրապետության շնորհիվ: 2018 թ.-ին Արցախում ցորենի համախառն բերքը կազմել է 81.7 հազ. տոննա, 2019 թ.-ին՝ 60.6 հազ. տոննա, իսկ 2020 թ.-ին՝ մինչև սեպտեմբերի 21-ը՝ 41.2 հազ. տոննա¹³: Պատերազմի հետևանքով տարածքների և ցանքատարածությունների կորստի վերաբերյալ պաշտոնական տեղեկություններ դեռևս չկան: Սակայն, ակնհայտ է, որ, ցանքատարածությունների կորստով և անվտանգության խնդիրներով պայմանավորված, Արցախում արտադրվող ցորենի քանակը կտրուկ նվազել է, և Արցախը մնացել է Հայաստանից մատակարարման հույսին: Ի վերջո, ՀՀ տնտեսության կախվածությունը ներ-

մուծումից էլ ավելի է մեծացել:

Հայաստանում սպառվող ցորենի միջինում 74%-ն օգտագործվում է սննդի (ընդ որում, սկսած 2013 թ.-ից, վերջինիս մասնաբաժինն օգտագործվող ցորենի ընդհանուր ծավալում նվազման միտում ունի, 2020 թ.-ին՝ 68.1%), իսկ 26%-ը՝ կերի արտադրության, սերմացուի և այլ նպատակների համար: Սննդի ոլորտում ցորենի օգտագործման հիմնական ուղղությունը, իհարկե, այլուրի արտադրությունն է: ՀՀ առանձնահատկությունն այն է, որ ցորենի ներմուծման ու տեղական արտադրության ծավալների վերը բերված համամասնությունն ու փոփոխությունները նույնությամբ չեն արտացոլվում այլուրի արտադրության համար օգտագործվող ցորենի վրա: Համաձայն հանրապետությունում այլուրի արտադրությամբ զբաղվող երեք խոշոր ընկերությունների տվյալների, որոնք ապահովում են հանրապետության այլուրի ընդհանուր առաջարկի 75-80 տոկոսը, այլուրի արտադրության մեջ օգտագործված տեղական արտադրության ցորենը 2018 թ.-ին կազմել է ընդամենը 10%, 2019 թ.-ին՝ 6%, իսկ 2020 թ.-ին՝ 11%: Այս ընկերությունների ներմուծած և ՀՀ-ում արտադրված ցորենի օգտագործման համամասնությունը (միջինը՝ 90/10) պայմանավորված է տեղական արտադրության ցորենի որակական ցածր հատկանիշներով: Այսպես՝ ՀՀ-ում արտադրվում է հիմնականում 4-րդ կարգի ցորեն, որից չի ապահովվում անհրաժեշտ որակի և քանակի այլուրի ելք: Այս դեպքում, նախ,

¹² Աննշան ծավալներով ցորենի ներմուծում իրականացվում է նաև այլ երկրներից, որոնք էական ազդեցություն չեն ունենում ընդհանուր ներմուծման վրա, և, ըստ տարիների, գումարային ներմուծումը չի գերազանցում 0.1 %-ը (Բելառուս, Թուրքիա, Լեհաստան և այլն):

¹³ Ըստ ՊԵԿ-ի և տնտեսավարող սուբյեկտների ներկայացրած տեղեկությունների:

¹⁴ 2020 թ.-ին, պատերազմը սկսելու դրությամբ, ցորենի բերքն արդեն հավաքված է եղել:

այլուրի ընդհանուր ելքն է փոքր. եթե ռուսական 2-րդ կամ 3-րդ կարգի ցորենից այլուրի ընդհանուր ելքը միջինում 67-72% է (մեկ տոննա ցորենից ստացված այլուրի բոլոր տեսակների քանակը), ապա տեղական արտադրության ցորենի դեպքում այդ ցուցանիշը չի գերազանցում 53%-ը: Բացի դրանից, տեղական արտադրության ցորենից ստացված այլուրի որակական հատկանիշներն ու կարգը նույնպես զգալիորեն զիջում են ներմուծված ցորենից ստացվածին: Տեղական արտադրության ցորենի պարագայում ավելի բարձր է 1-ին և 2-րդ կարգի այլուրի ելքը, իսկ ներմուծված ցորենի դեպքում՝ բարձրակարգինը, որը շուրջ 1.5-2 անգամ գերազանցում է 1-ին և 2-րդ կարգի այլուրի ելքի հանրագումարը (կախված ներմուծված ցորենի կարգից):


Կարելի է ենթադրել, որ այլուրի արտադրության մեջ տեղական և ներմուծված ցորենի օգտագործման վերը նշված համամասնությունը վերաբերում է նաև ՀՀ-ում այլուրի ընդհանուր արտադրությանը: Այսինքն՝ այստեղ այլուրի արտադրությունն առավելապես հիմնված է ներմուծված ցորենի վրա, իսկ տեղական ցորենը հիմնականում օգտագործվում է սպիրտի, մակարոնեղենի, կերի արտադրության մեջ: Հետևաբար՝ այլուրի արտադրության մոտ 90 և ավելի տոկոսն ապահովվում է

ՌԴ-ից ներմուծված ցորենի շնորհիվ:

Ինչ վերաբերում է հենց այլուրին, ապա պետք է նշել, որ ՀՀ-ում սպառվող այլուրի 90%-ը տեղական արտադրության է և միայն 10%-ն է ներմուծված: Ըստ ՀՀ մաքսային ծառայության տվյալների՝ ներմուծված այլուրի 99%-ը կրկին բաժին է ընկնում ՌԴ-ին (գծապատկեր 6):

ՌԴ գերիշխող դիրքով պայմանավորված՝ ՌԴ ցորենի շուկայում ընթացող միտումները և գնային փոփոխություններն ամբողջությամբ արտացոլվում են ՀՀ ցորենի և այլուրի շուկայում, որից հետո անդրադառնում հարակից այլ ապրանքների գնագոյացման, իսկ վերջնարդյունքում՝ նաև հանրապետության գնաճի տեմպերի վրա, քանի որ ցորենը գնագոյացնող ռազմավարական ապրանք է:

Թե՛ այլուրի արտադրության համար անհրաժեշտ ներմուծված ցորենի և թե՛ այլուրի ներմուծման նման համամասնությունը, իհարկե, խոցելի է դարձնում ՀՀ-ն՝ ինչպես մեկ երկրից մեծ կախվածության, այնպես էլ ռուս-ուկրաինական պատերազմի և դրա հետևանքով ՌԴ-ի նկատմամբ Արևմուտքի կողմից կիրառվող պատժամիջոցների, իսկ դրանց հետևանքով՝ նաև ՌԴ հակաքայլերի, մասնավորապես՝ պարենային ապրանքների, առաջին հերթին՝ ցորենի արտահանման մասնաբաժինների



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

Այլուրի ներմուծման կառուցվածքն ըստ հիմնական երկրների, 2020 թ.

սահմանման և սահմանափակումների կիրառման առումներով: Այս համատեքստում, անհրաժեշտ է նշել, որ վերը նկարագրված բոլոր գործողություններն անխուսափելիորեն հանգեցնելու են հացահատիկի, ցորենի, հետևաբար նաև ալյուրի և հացի գների կտրուկ բարձրացմանն ամբողջ աշխարհում, այդ թվում՝ ՀՀ-ում: Իսկ քանի որ ցորենն ու ալյուրը գնագոյացնող ապրանքներ են, ապա ընդհանուր բարձր գնաճային՝ դեռևս 2021 թ.-ին ձևավորված ճնշումն էլ ավելի է սրվելու, ինչը Հայաստանն ուղղակիորեն է կրելու իր վրա:

Ինչ վերաբերում է զուտ պարենային անվտանգության ապահովմանը կամ, այլ կերպ ասած, հացի պակասուրդի հավանականությանը՝ պայմանավորված ՌԴ կառավարության մինչև 2022 թ. օգոստոսի 31-ը դեպի ԵԱՏՄ երկրներ հացահատիկի արտահանման ժամանակավոր սահմանափակմամբ, ապա այդ առումով, դիսկն ու բնակչության խուճապային տրամադրությունները, համենայն դեպս, կարճաժամկետ հատվածում արդարացված չեն, քանի որ, ըստ ՌԴ տնտեսական զարգացման նախարարության տվյալների, այս տարեսկզբին ԵԱՏՄ անդամ երկրները, այդ թվում՝ Հայաստանը արդեն գնել են հացահատիկի անհրաժեշտ պաշարներ: Ուստի ԵԱՏՄ տարածքում հացահատիկի պակասուրդ, գոնե մինչև 2022 թ.-ի բերքահավաքը, չի կարող լինել: Բացի դրանից, անհրաժեշտության դեպքում ԵԱՏՄ երկրները հացահատիկի հավելյալ քանակություն ձեռք բերելու հնարավորություն ունեն՝ ըստ ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարության տրամադրած լիցենզիայի: Համաձայն ՌԴ գյուղատնտեսության նախարարության տվյալների՝ ներկայում ՌԴ՝ հացահատիկի պաշարներով բավարարվածությունը մոտ 150% է, ինչը նշանակում է, որ երկիրը զգալի պաշարներ ունի մինչև 2022 թ.-ի հացահատիկի բերքահավաքը՝ ԵԱՏՄ երկրներ հավելյալ արտահանում ապահովելու համար:

Առավել երկարաժամկետ կանխատե-

սումների համար անորոշությունները չափազանց շատ են՝ պայմանավորված, նախևառաջ, պատերազմի տևողությամբ: Սակայն, կարծում ենք՝ պարենային անվտանգության տեսանկյունից, այս ամենը կարող է ազդակ դառնալ ՀՀ կառավարության համար հացահատիկային մշակաբույսերի, առաջին հերթին՝ ցորենի արտադրության ծավալների ավելացման և աջակցության լայնածավալ, նպատակային և հետևողական քաղաքականության իրականացման առումով: Արդյունքն անհամեմատ մեծ կլինի, եթե նման քաղաքականությունն ուղեկցվի ցորենի նոր, ավելի բարձր կարգի սերմացուների ստացման ու ՀՀ-ում տեղայնացման գործընթացով: Իհարկե, միայն ցորենի արտադրության ծավալների աճը չի կարող ապահովել հանրապետության ինքնաբավության մակարդակի էական բարձրացում: Մեր համոզմամբ՝ հենց այս տարի պետք է մեկնարկել ցորենի արտադրության խթանման լուրջ թիրախային ծրագրեր, քանի դեռ գյուղատնտեսական տարին, մասնավորապես՝ զարնանացանի աշխատանքները դեռևս չեն սկսվել: Արագ փոփոխվող աշխարհում՝ անորոշության ու անկանխատեսելիության միջավայրում, ՀՀ-ի նման երկրների համար որպես պարենային անվտանգության երաշխիքներ պետք է հանդես գան ինքնաբավության մակարդակի հնարավորինս բարձրացումն ու ներմուծման աշխարհագրության և ծավալների բազմազանեցումը, որոնց շնորհիվ հնարավորություն կընձեռվի ճգնաժամային իրավիճակներում խուսանավելու:

Այս փորձն արդեն իսկ կիրառվում է: Մասնավորապես՝ 2021 թ.-ին ցորենի խոշոր ներմուծող երկրների մեծ մասը ներդրել է համապատասխան արտադրության խթանման լայնածավալ ռազմավարական ծրագրեր՝ ուղղված ինքնաբավության մակարդակի բարձրացմանը: Նման ծրագրեր ներկայում իրականացվում են ոչ միայն ցորեն ներմուծող (Թուրքիա, Եգիպտոս, Ալժիր), այլև արտադրող (Պակիստան, Չինաստան) առաջատար երկրներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. FAO. 2019. Regional Overview of Food Security and Nutrition in Europe and Central Asia 2019. Structural Transformations of Agriculture for Improved Food Security, Nutrition and Environment. Budapest. ISBN 978-92-5-132000-6
2. Обзор рынка зерна в государствах-членах Евразийского экономического союза за 2020-2022 годы, Департамент агропромышленной политики, Евразийская экономическая комиссия, М., 2022
3. Н. Аварский, Н. Пролыгина, Х. Гасанова, Д. Федюшин, Государственные интервенции как форма маркетингового регулирования рынка зерна //Экономика сельского хозяйства России, Posted: 2014
4. Узун В.Я., Светлов Н.М., Шагайда Н.И., Логинова Д.А., Шишкина Е.А., Совершенствование механизмов государственного регулирования российского рынка зерна, «Российская Академия народного хозяйства и государственной службы при президенте Российской Федерации», М., 2017.

Диана ГАЛОЯН

Ректор, доктор экономических наук, профессор, АГЭУ

Татул МКРТЧЯН

Проректор по науке, доктор экономических наук, АГЭУ

ՕԳՐԱՆԻՇՆԱԿՆԵՐ ԱՐՄԵՆԻԱԿԱՆ ՐՈՍՍԻՅՈՒՄԻ ՊՇԵՆԻՑԻ ԵՎ «ԽՆԵԿԻ ԽԼԵԲԱՆԱՏՈՒՄ»-Ի ՎԵՐՄԵՆԻԱԿԱՆ

За последние годы, в условиях непредсказуемых событий в мире, вопрос продовольственной безопасности некоторых стран стал достаточно актуальным. Экономические связи и цепочки поставок, нарушенные кризисом COVID-19, в прошлом году продемонстрировали регулятивные тенденции. Хотя мировой рынок продолжал работать в условиях эпидемии, но уже достаточно адаптировался к этой ситуации. Одной из ключевых особенностей 2021 года стал стабильный рост цен на основные товары, который достиг максимального уровня за последние 10 лет. Однако установившуюся хрупкую стабильность на мировых рынках продовольствия, коренным образом нарушила русско-украинская война. Многие страны мира уже столкнулись с проблемами продовольственной безопасности и высокой инфляцией, поскольку конфликтующие обе страны являются ведущими производителями и экспортерами важнейших продуктов питания (пшеница, кукуруза, растительное масло и др.).

Ключевые слова: *производство пшеницы, экспорт пшеницы, мука, дефицит зерна, продовольственная безопасность*

Diana GALOYAN

Rector, Doctor of Economics, Professor, ASUE

Tatul MKRTCHYAN

Vice-Rector for Science, Doctor of Economics, ASUE

EXPORT RESTRICTIONS ON RUSSIAN WHEAT AND «ISSUE OF BREAD» IN ARMENIA

In recent years, in the context of unpredictable events in the world, the issue of food security in some countries has become quite relevant. Economic ties and supply chains disrupted by the Covid-19 crisis showed regulatory trends last year. Although the global market continued to operate in the context of the pandemic, it has already adapted sufficiently to this situation. One of the key features of 2021 was the steady increase in prices for basic goods, which reached the highest level in the last 10 years. However, the established fragile stability in the world food markets was fundamentally violated by the Russian-Ukrainian war. Many countries of the world are already facing food security problems and high inflation, since the two conflicting countries are the leading producers and exporters of the most important food products (wheat, corn, vegetable oil, etc.).

Keywords: *wheat production, wheat export, flour, grain shortage, food security*